

րեալք են ի տեսանելոյ, բերանն ի խօսելոյ
զատուածային քարոզութիւնսն վարդապետե-
լոյ՝ եւս յօրհնելոյ զմեզ լռեալ են աւասիկ.
տեսէք եւ այժմ՝ եւ զձեռն որ ոչ կարէ վերա-
ցուցանել եւ խաչակնքել զձեզ, եւ ասել առ
ձեզ խաղաղութիւն ընդ ձեզ եւ այլն, եւ
ականջքն ի լսելոյ զճերմեռանդ աղօթքն ձեր,
եւ առ Աստուած մատուցանելոյ (իբրեւ զհրեշ-
տակն Կուռնելեայ). արդ զրկեալք ի լսելոյ եւ
խցեալք զգալապէս, եւ ոչ որչափ առ Աս-
տուած իմանալաբար, եւ ինքն իսկ բոլորովիմբ
զրկեցեալ է ի համայնից զգայութեանց եւ շար-
ժութեանց, եւ բովանդակ դասուց եկեղեցակա-
նաց ի հոգեւոր պարերգութեանցն, եւս ձեզ
նման հոգեւոր եւ սիրելի որդեկացդ ի տեսու-
թենէն հեռացեալ մեկնեցաւ այսօր. ուրեմն
պարտիք եւ դուք վասն նորա առ Աստուածն
գորովագութ ջերմեռանդապէս աղօթս մատու-
ցանել, զոր մխիթարիչ Հոգին Սուրբ Աստուած
զձեզ եւ զմեզ մխիթարեսցէ, եւ զհոգի երա-
նելոյ Պատրիարքիս այսօրիկ, ի լուսեղէն խո-
րանսն ընդ սրբոցն իւրոց զմայլեցուցէ տեսու-
թեամբ իւրով։

Գրիգոր Պատրիարք որ միշտ յարգած էր
զՍարգիս եւ զինք “ Հայր վարդապետ ” կ’անուա-
նէր, թոյլ տուաւ որ նախկին տեղը՝ Ս. Գր.
Լուսսւորիչ բնակի։ Տարի մ’ետքը՝ 1765ին
Ղալաթիոյ քահանայք Սարգսի խօսքերէն
տհաճ՝ անոր դարան մը լարեցին։ Վասն զի
Սարգիս քարոզներուն մէջ կը յորդորէր, որ